Հասցեատեր՝
«Հայք ՖԱ» ՍԱ ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ vardan.dav@bk.ru

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27.11.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	ԱԽ-122
Խախտում՝	1. Խաղի ժամանակահատվածում դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցների թերի աշխատանք կատարելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ) 2. Դաշտի տեր թիմի երկրպագուների՝ խաղադաշտ ներխուժելը (Հոդված 15, 2-րդ կետ) 3. Խաղի ժամանակահատվածում տեխնիկականգոտում գտնվող պահեստային ֆուտբոլիստների խաղադաշտ ներխուժելը, որի հետևանքով խաղը դադարել է, բայց խաղի արդյունքի վրա ազդեցություն չի թողել և խաղը շարունակվել է (Հավելված 1 Ա, 17-րդ կետ)
Առաջնություն՝	2025-2026 Հայաստանի Առաջին Խմբի Առաջնություն
Խաղ՝	«Հայք» - «Անդրանիկ», 18.11.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 22-րդ հոդվածի 2-րդ կետը՝ համակցել սույն վարույթի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նկարագրված կարգապահական խախտումների համար սահմանված պատասխանատվության միջոցները և «Հայք ՖԱ» ՍԱ ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի՝ 80,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: